Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-102[1]-29.11.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. *«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186* օրենքի 35-րդ հոդվածում «համալիր հարկային ստուգմամբ» բառերից հետո լրացնել «կամ պետական տուրքի հաշվարկման եւ գանձման ճշտության ստուգմամբ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

երկրորդ ընթերցում

Կ-102[1]-29.11.2021-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186~~-Ն~~ օրենքի 35-րդ հոդվածում «համալիր հարկային ստուգմամբ» բառերից հետո լրացնել «կամ պետական տուրքի հաշվարկման եւ գանձման ճշտության ստուգմամբ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-102-29.11.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**«**Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի հ**ոդված 1**	Նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկվում է պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածում հիշատակվող օրենսգրքի լրիվ անվանումը համա-պատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 289-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում կատարվող լրացման մեջ «Պետական տուրքի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) կրճատ անվանումը հիշատակելիս առաջարկվում է հանել «ՀՀ» հապավումը:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածում «ՀՀ » հապավումը հանվել է:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» հայաստանի հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից առաջարկվում է հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է Նախագծի վերնագրից հանվել են երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Նախագծի 1-ին հոդվածում Օրենքի լրիվ անվանման հիշատակումն առաջարկ-վում է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին՝ հանելով «Հայաստանի Հանրապետության» բառերը, ինչպես նաև Օրենքի հերթական համարի նորմատիվ բնույթի վերաբերյալ նշումը:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «Հայաստանի Հանրապետության» բա-ռերը և օրենքի հերթա-կան համարի նորմատիվ բնույթի վերաբերյալ նշումը:	Ընդունվել է